



# Մ ՈՒՐԲ Զ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



### ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱԼԵՆ ԵՏՔ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

25 ՅՈՒՆԻՈՒՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Առակաւոր «անառակ»ը	Էջ 3
Ուսուցում աղօթքի մասին	Էջ 5
Ծանուցում	Էջ 8

#### ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (63.7-18)

Տիրոջ ողորմածութիւնը պիտի յիշեցնեմ, Տիրոջ մեծագործութիւնները պիտի փառաբանեմ. այն բոլորին համար որ Տէրը ըրաւ մեզի համար: Իսրայէլի տան դատաւորն ու բարերարը ի՛նքն է, որ իր ողորմութեամբ եւ արդարամտութեամբ այս բաները ըրաւ մեզի:

Տէրը ըսաւ. «Ասոնք իմ ժողովուրդս են, որդիներս են, ամօթով պիտի չձգեն զիս». եւ զանոնք փրկեց իրենց բոլոր նեղութիւններէն: Ո՛չ թէ պատգամաւոր մը կամ հրեշտակ մը, այլ Տէրը ի՛նք փրկեց զանոնք: Որովհետեւ կը սիրէր զանոնք եւ կը խնայէր անոնց, ինք անձամբ փրկեց. ոտքի կանգնեց եւ բարձրացուց զանոնք անցեալ բոլոր ժամանակներուն մէջ:

Բայց անոնք անհնազանդ գտնուեցան եւ իր սուրբ Հոգին տրամեցուցին. ուստի Տէրը թշնամացաւ եւ ինք պատերազմեցաւ անոնց դէմ: Այն ատեն անոնք հին օրերը փնտռեցին, ըսելով. «Ո՞ւր է Մովսէսը, Տիրոջ ծառան. ո՞ւր է Տէրը որ ծովէն հանեց իր հօտին հովիւը. ո՞ւր է ան որ իր սուրբ Հոգին դրաւ իր ժողովուրդին մէջ. ան՝ որ իր աջով առաջնորդեց Մովսէսը եւ իր անունը յաւերժացնելու համար իր փառաւոր զօրութեամբ անոր առջեւ բացաւ ծովուն ջուրերը: Ապա իր ժողովուրդը բացուած

անդունդէն անցուց այնպէս դիւրին՝ ինչպէս ձի մը կը քալէ չոր գետնին վրայէն կամ ինչպէս նախիրը կ'անցնի դաշտին մէջէն: Տիրոջ Հոգին իջած՝ կ'առաջնորդէր զանոնք:

Այո՛, այդպէս առաջնորդեցիր քու ժողովուրդդ, քու անունդ փառաւորելու համար: Արդ, նայէ՛ երկինքէն, քու սուրբ եւ փառաւոր բնակութենէդ, եւ տե՛ս. ինչո՞ւ ա՛լ չես հետաքրքրուիր մեզմով եւ զօրութիւնդ ցոյց չես տար. ո՞ւր մնաց քու զթառատ ողորմութիւնդ, որով կը ներէիր մեզի: Չէ՞ որ մեր հայրն ես դուն: Նոյնիսկ եթէ Աբրահամ չի

գիտեր մեզ եւ Յակոբ չի ճանչնար մեզ, բայց դուն մեր Հայրն ես, ո՛վ Տէր, փրկէ՛ մեզ, որովհետեւ մենք սկիզբէն ի վեր քեզի կը պատկանինք: Ինչո՞ւ կը ձգես որ խոտորինք քու ճամբաներէդ, ո՛վ Տէր, ինչո՞ւ թոյլ կու տաս որ խուլ ըլլանք քու կանչիդ եւ քու երկիւղդ չունենանք: Վերադարձի՛ր, Տէ՛ր, քու ծառաներուդ սիրոյն. վերադարձի՛ր այն ժողովուրդին սիրոյն որ քու ժառանգութիւնդ պիտի ըլլայ: Չըլլայ որ ընդմիշտ կորսնցնենք Սիրոնը, քու սուրբ լեռդ. որովհետեւ ահա մեր թշնամիները առժամաբար տիրեցին մեզի, ոտնակոխ ըրին քու սրբարանդ, ու մենք եղանք առաջուան նման, երբ տակաւին մեր Տէրը չէիր դուն, երբ դեռ քու անունդ չէինք կրեր:

Ինչո՞ւ կը ձգես որ խոտորինք քու ճամբաներէդ, ո՛վ Տէր, ինչո՞ւ թոյլ կու տաս որ խուլ ըլլանք քու կանչիդ եւ քու երկիւղդ չունենանք:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ՏԻՄՈԹԷՆՈՍԻ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ  
ՆԱՄԱԿԷՆ  
(3.1-12)**

Սա՛ եւս գիտցիր, թէ վերջին օրերուն դժուար ժամանակներ պիտի գան, որովհետեւ մարդիկ պիտի դառնան անձնասէր, դրամապաշտ, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողներուն անհնազանդ, ապերախտ, սրբութիւնները ոտնակոխող, տմարդի, անգութ, չարախօս, անհանդուրժող, դաժան, բարիին թշնամի, մատնիչ, անպատկառ, գոռոզ, եւ աւելի հեշտանքը սիրող՝ քան զԱստուած: Երեւութապէս աստուածապաշտ են անոնք, բայց խորքին մէջ չեն հաւատար աստուածապաշտութեան զօրութեան: Զգուշացի՛ր անոնցմէ: Անոնց մէջ կան նաեւ այնպիսիներ, որոնք տունէ տուն կը մտնեն եւ իրենցմով կը հրապուրեն մեղքերով ծանրաբեռնուած եւ զանազան ցանկութիւններէ բռնուած թեթեւբարոյ կիները, որոնք միշտ կ'ուզեն գիտնալ, բայց երբեք ճշմարիտ գիտութեան չեն հասնիր: Այնպէս ինչպէս Եանէս եւ Եամբրէս մոգերը Մովսէսի հակառակեցան, միտքով ապականած եւ հաւատքով սնանկ այս մարդիկն ալ ճշմարտութեան կը հակառակին: Բայց իրենց յաջողութիւնը երկար չի տեւեր, որովհետեւ իրենց անմտութիւնը շուտով յայտնի պիտի ըլլայ բոլորին, ճիշդ ինչպէս այն երկուքինը եղաւ:

Բայց դուն կառչած մնա իմ ուսուցումիս, կեանքի օրինակիս, յօժարութեանս, հաւատքիս, համբերատարութեանս, որոնք ցուցաբերեցի՝ նոյնիսկ հալածանքներու եւ չարչարանքներու մէջ: Գիտես թէ ի՞նչ պատահեցաւ ինձի Անտիօքի, Իկոնիոնի եւ

բոլոր անոնք որոնք կ'ուզեն աստուածապաշտութեամբ Քրիստոս Յիսուսի միացած ապրիլ, անպայման հալածանքներու պիտի ենթարկուին:

Լիստրայի մէջ. թէ ի՞նչպիսի հալածանքներ կրեցի, եւ այդ բոլորէն Տէրը զիս ազատեց: Նոյնպէս, բոլոր անոնք որոնք կ'ուզեն աստուածապաշտութեամբ Քրիստոս Յիսուսի միացած ապրիլ, անպայման հալածանքներու պիտի ենթարկուին:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ  
(6.22-38)**

Յաջորդ օր, ժողովուրդը՝ որ մնացած էր լիճին միւս կողմը, տեսաւ թէ հոն միայն մէկ նաւակ կար, որուն մէջ Յիսուսի աշակերտները մտան եւ առանձին գացին. իսկ Յիսուս աշակերտներուն հետ նաւակ չմտաւ: Յետոյ Տիբերիայէն ուրիշ նաւակներ ալ եկան հոն, ուր Յիսուս Աստուծոյ գոհութիւն տալով բազմացուցած էր հացը եւ տուած ժողովուրդին, որպէսզի ուտեն: Ժողովուրդը տեսնելով թէ Յիսուս հոն չէր, ոչ ալ իր աշակերտները, նաւակները առին եւ Կափառնաում եկան Յիսուսը փնտռելու համար: Երբ զինք գտան լիճին միւս կողմը, հարցուցին. «Վարդապետ, ե՞րբ եկար հոս»: Յիսուս անոնց պատասխանեց. «Կ'ըսեմ ձեզի, վստահաբար դուք զիս կը փնտռէք՝ ո՛չ թէ որովհետեւ հրաշքներ տեսաք, այլ որովհետեւ այդ հացէն կերաք եւ կշտացաք: Փոխանակ կորստական ուտելիքը փնտռելու, ջանացէք ապահովել այն կերակուրը որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ: Այդ կերակուրը Մարդու Որդին պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»:

Անոնք հարցուցին. «Ի՞նչ ընենք, որ Աստուծոյ ուզածը կատարած ըլլանք»: Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ ուզած գործը այն է, որ հաւատաք անոր՝ որ ինք զրկեց»: Անոնք ըսին. «Ի՞նչ հրաշք պիտի գործես, որպէսզի տեսնենք եւ քեզի հաւատանք. ի՞նչ պիտի ընես: Մեր հայրերը մանանան կերան անապատին մէջ, ինչպէս գրուած է. «Անոնց երկինքէն հաց տուաւ

ուտելու համար»: Յիսուս անոնց ըսաւ. «Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի, թէ ինչ որ Մովսէս ձեզի տուաւ՝ երկինքէն իջած հացը չէր: Հայրս է որ ձեզի կու տայ երկինքէն իջած ճշմարիտ հացը: Որովհետեւ Աստուծոյ տուած հացը ան է՝ որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհին»: Անոնք ըսին. «Տէ՛ր, մի՛շտ տուր ձեզի այդ հացը»:

Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ կեանքի հացը: Ան որ ինձի կու գայ՝ բնաւ պիտի չանօթենայ եւ ան որ ինձի կը հաւատայ՝ երբեք պիտի չծարաւնայ: Բայց հիմա ըսի ձեզի, տեսաք ալ զիս, եւ տակաւին չէք հաւատար: Բոլոր անոնք որ Հայրը ինձի կու տա՝ ինձի պիտի գան, եւ ես ինձի եկողը պիտի չմերժեմ. որովհետեւ ես երկինքէն իջայ՝ ո՛չ թէ իմ կամքս կատարելու, այլ կամքը անոր՝ որ զիս զրկեց»:

«Ես եմ կեանքի հացը: Ան որ ինձի կու գայ՝ բնաւ պիտի չանօթենայ»:



Հրանդ Տինք առաւելաբար ճանչցուեցաւ իբր «Ակօս» շաբաթաթերթի հիմնադիրներէն մէկը (Պարբերականին ծննդեան հովանաւորն էր Թուրքիոյ Հայոց Պատրիարք՝ Գարեգին արք. Գազանճեանը): Ակօսը սկսաւ լոյս տեսնել 1996-ին հայերէն եւ թրքերէն լեզուներով: Այդ թուականէն ան ստանձնած էր խմբագրապետի պաշտօնը: Հետաքրքրական է, որ շաբաթաթերթին առաջին թիւը լոյս տեսած էր Ս. Զատիկուայ օրը: Պատգամը յստակ է. գայն հրատարակողները կը հաւատային, որ բոլոր տառապանքներէն եւ մահէն ետքը՝ յարութիւնը կայ, այսինքն՝ այն դէպքը որ մահը կը լուծէ, այսինքն՝ այն դէպքը՝ ուր մահը կոխուած է, եւ կեանքի, նո՛ր կեանքի մը յոյսը եւ լոյսը կը լեցնեն հոգիները:

Չեմ գիտեր, թէ Հրանդի ընկերները ի՞նչ կրօնական նայուածք ունէին, բայց իր պարագային ինք իսկ ըսած էր, թէ աղօթող մը չէր եղած: Մանկութենէն «անառակ» ըլլալուն՝ սաղմոսներ սորվեցնելով ուզած էին խելօքցնել զինք: Բայց այս «անառակ» իր կեանքի վերջին հանգրուանին այնքան խորունկ կրօնականութեամբ մը պիտի յայտնուէր, որ մարդ կը տարուի մտածելու, թէ անոր հոգիի խորքին՝ հոգեւոր հաղորդութիւն մը կենդանի էր եւ կ'աճէր:

**ԱՌԱՎԱԲՈՐ «ԱՆԱՌԱՎ»Ը**  
ԳԱՌՆԻԿ Ք.Գ.

Ահա երկրորդ տարելիցն է Հայոց Յեղասպանութեան վերջին նահատակին՝ Հրանդ Տինքի:

Ծնած էր 1954-ին, Մալաթիա: 1960-ին ընտանեօք Պոլիս փոխադրուած էր: Խռովահար տան մը դառնութիւնը կը ճաշակէր երկու կրտսեր եղբայրներուն հետ: Իր նախնական կրթութեան մէջ մեծ ազդեցութիւն պիտի ունենար Պատուելի Հրանդ Կիւզէլեան: Հրանդ Տինք գայն ներկայացուցած է իբր ազգային ոգիով քաջ անձնաւորութիւն մը: Անոր ազդեցութիւնը նաեւ կրօնական պիտի ըլլար:

Տինք պիտի հասնէր համալսարանական ուսման, եւ այդ շրջանին է, որ ձախակողմեան գաղափարաբանութեան համակիր կը դառնար:

Այն ատեն կը սիրահարուէր իր ապագայ տիկնոջ՝ Ռաքէլի, գորը վաղուց կը ճանչնար, եւ կ'ամուսնանար 1976-ին: Աստուած երեք զաւակներ կը պարգեւէր իրենց:



Հրանդ Տինք խոնարհ հոգիով մտաւորական մըն էր, որ ինքզինք իբր այդպիսին չէր դաւաններ, եւ իր ամբողջ ըրածը՝ կարգալ եւ գրել սիրելու կը կապէր: Ի՞նչ նախանձելի համեստութիւն...

Ան քաջութիւնը ունեցաւ Թուրքիոյ մէջ, կամ երկրին՝ ուր «ամէն տեղ հայուն դէմ թշնամութիւն» կայ՝ Հայոց Յեղապանութեան մասին արտայայտուելու: Չուզեց որ հայը անարգուի, նաեւ չուզեց որ թուրքը անարգուի: Ան գիտէր, որ անարգողը չի ճանչնար անարգածը, եւ զայն կը փոխէ մերժելի պատկերի մը:



Հրանդ Տինք արդարութեան գին-ւորը եղաւ, եւ ոչ թէ թշնամանքի: Եւ այս առաքելութեան մէջ, ամբաստանութիւններու ենթարկուեցաւ՝ մինչեւ Ակօսի խմբագրատան առջեւ իր նահատակութիւնը:

Իմ առաջին հանդիպումս իրեն հետ տեղի ունեցաւ անցեալ տարի՝ տեղւոյս Համազգայինի կազմակերպած ձեռնարկին, որուն հրաւիրուած էր արուեստաբան Նուրիճա Մաթոսեան: Թերեւս «հանդիպում» բառը տարօրինակ հնչէ, որովհետեւ մտաւորականը սպաննուած էր 2007-ին:

Տիկ. Մաթոսեան հարցազրոյց մը արձանագրած էր Հրանդ Տինքի հետ: Եւ Սանահին մասնաճիւղը հրաւիրած էր արուեստաբանը զայն ցուցադրելու: Ան եկած էր նաեւ՝ այլ ձեռնարկի մը ընթացքին՝ ներկայացնելու Մեծ Եղեռնի մնացորդներէն՝ Արշիլ Կորքիի կեանքն ու արուեստը:

Խոր յուզումով դիտեցի հարցազրոյցը, եւ անիկա վերածուեցաւ հան-դիպումի: Ակնդրութիւն/ունկնդրութիւնս զիս հանեց այնտեղ՝ ուր այնքան մօտիկ էր Հրանդ Տինք. պարզ եւ մաքուր հոգի մը, անծածկոյթ ինքնութիւն, հեզ, քաղցրաբարոյ, ինքնավստահ, անսեթեւեթ, զգայուն, խորատես, մտքի եւ տեսիլքի մարդ, հազորդակից պապերու շինարար ոգիին, արմատին էութեամբ գիտակից, արդար եւ մինչեւ վերջ պայքարի նուիրեալ, եւ ապաւինող Աստուծոյ:

Քիչ առաջ ակնարկեցի այն խորունկ կրօնականութեան, որ իր կեանքի վերջին հանգրուանին պիտի յայտնուէր: Հարցազրոյցին

վերջաւորութիւնը այդ յայտնութեան պսակ մըն է:

Մինչ իրեն դէմ ամբաստանութիւնները, եւ անոնց հետ մահուան սպառնալիքները կը բազմանային՝ օր մը եմակ մը կը ստանար

ծերունի իսլամէ մը: Ծերունին գրած էր, թէ ռամատանի շրջան ըլլալուն՝ ինք օրական հինգ անգամ կ'աղօթէր, ուստի որոշած էր այդ օր Հրանդ Տինքի համար նաեւ աղօթել: Եւ մտաւորականը ինքն իրեն մտմտալէ ետք, հարց կու տար իր ձախակողմեան ընկերներուն, թէ իսլամը իրեն համար կ'աղօթէ,

քրիստոնեան իրեն համար կ'աղօթէ, ինք ինչո՞ւ պիտի չաղօթէ իրեն համար: Եւ Հրանդ Տինք ինքն իրեն համար կ'աղօթէր Սաղմոս 23-ը: Լսէ՛ Հրանդի ձայնը, լսէ՛ առակաւոր ձայնը.

«Տէրը իմ հովիւս է.

ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ: Զիս խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ,

հանդարտ ջուրերու ֆոլ ինծի կ'առաջնորդէ: Հոգիս կը նորոգէ:

Իմ անուանը համար արդարութեան ցամաքներու մէջ կ'առաջնորդէ ինծի:

Թէեւ մահուան շուքի ձորին մէջ ալ պտըտիմ,

չարէն պիտի չվախնամ, վասնզի դուն ինծի հետ ես,

քու ցուպը զիս կ'առաջնորդէ եւ գաւազանդ կը պաշտպանէ:

Սեղան կը պատրաստես իմ առջեւ՝ իմ թշնամիներուս դիմաց.

իմ գլուխս իւղով կ'օծես,

իմ բաժակս խիստ լեցուն է:

Յիրաւի բարեբարութիւնն ու ողորմութիւնը ինծի հետ պիտի գան կեանքիս բոլոր օրերուն մէջ ու շատ օրեր Տիրոջ տունը պիտի բնակիմ»:

Այս՝ ինքն իրեն համար կատարուած աղօթքը անձնասիրութենէ մը չէր գար, այլ առ Աստուած վստահութենէն, որ ուժ կու տար իրեն՝ արդարութեան համար քալելու...

Հրանդ Տինք հողին մէջ ինկած հատիկն է ցորենի, որ «բազում արդիւնս առնէ»:

**ՄԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ՄԱՏԹԵՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԻՆ**

**ՀԵՂԵՆԿԻ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ  
ԽԱՐԱԳԻՐԻ ԳԵՈՒՆԿ Բ. Գ.**

**Զ ԳԼՈՒԽ**

ՈՒՄՈՒՅՈՒՄ ԱՊՕԹԵՐ ԴԱՐՆԵ:

«Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնները կեցած աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վաստի եղէք, միայն ատկա է անոնց վարձատրութիւնը:

Գուցէ երբ կ'աղօթես՝ մտի՛ր սեմեակդ, գոցէ՛ դուռը եւ ծածուկ կերպով աղօթէ՛ քու երկնաւոր Հօրդ: Եւ Հայրդ որ անտեսանելի է ու կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցանէ յայտնապէս:

Տակաւին, երբ կ'աղօթէք, մի՛ շատախօսէք հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն որ եթէ շատ խնդրեն՝ լսելի պիտի դառնան: Արդ, մի՛ նմանի՛ք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէք» (5-8):

**Յիսուս ճշմարտութիւնը ուսուցանելու համար բազմաթիւ կերպեր կը գործածէ. նախ՝ սխալ ձեւեր կը մատնանչէ, եւ ապա ուղիղին մէջ քարելու կը հրաւիրէ:**

**Ան առանձնական աղօթքին վրայ կը շեշտէ եւ ծածուկ կերպով աղօթելը կը գնահատէ:**

**Արդեօք ասիկա ըսել է, թէ Յիսուս հրապարակային աղօթքը կամ հրապարակայնօրէն կատարուած աղօթքը խոտելի՞ կը գտնէ: Ան արդեօք ծիսական աղօթքը կը մերժէ՞ր, եւ միայն առանձնաբար կատարուած աղօթքը ընդունելի կը գտնէր:**

Այս հարցումներուն պատասխանելէ առաջ, նախ հարց տանք, թէ աղօթքը անհրաժեշտ է մեզի համար: Մանաւանդ որ Յիսուս ըսած է, թէ Հայրն Աստուած սկիզբէն գիտէ մեր կարիքը, այսինքն՝ աղօթքով իրմէ խնդրելէ առաջ: Քանի այդպէս է, ես ի՞նչ պէտք ունիմ աղօթելու, կրնան ըսել մարդիկ:

Եկէ՛ք, եւ պզտիկ շեղում մը ընենք նախ,

ու տեսնենք, թէ որո՞նք են «աղօթք» բառին հոմանիշները:

«Աղօթք» կը նշանակէ՛

- աղերս.

- հայցուած.

- խնդրանք.

- աղաչանք:

Աղօթքը կը յայտնէ մարդուն կախուածութիւնը Աստուծմէ: Մեր կեանքը եւ անոր բոլոր երեսները կախում ունին Աստուծմէ: Աղօթքով է, որ արարիչն ու արարածը փոխյարաբերութեան մէջ կը մտնեն: Մեր կախուածութիւնը Աստուծմէ՛ մեզ կը մղէ անոր աղերսելու, անկէ հայցելու եւ խնդրելու, եւ անոր աղաչելու:

Գուցէ ըսուի, թէ Աստուած կ'ողզէ, որ մենք իրմէ կախուած մնանք, որպէսզի մի՛շտ իրեն աղօթենք: Ասիկա եսասէր աստուծոյ մը պատկերացում է: Մեր հաւատքին Աստուածը եսասէր չէ:

Ըսի, որ աղօթքը մարդուն Աստուծմէ կախուածութիւնը կը յայտնէ: Բայց ասիկա ըսել չէ, թէ Աստուած կ'ողզէ, որ մարդը իրմէ կախեալ վիճակի մէջ ըլլայ: Կայ առարկայական ճշմարտութիւն մը սակայն, որ անհերքելի է: Երբ մենք անօթի ենք, ուրեմն անօթի ենք: Անօթութիւնը երբ կը զգանք՝ ալ անիկա անժխտելի է: Մարդ էակին Աստուծմէ կախուածութեան զգացումը ո՛չ թէ Աստուծոյ ուզածն է, այլ կու գայ մարդուն արարած ըլլալէն, Աստուծմէ արարուած ըլլալէն: Կախուածութեան զգացումը այնքան բնական է, որքան անօթութեան զգացումը: Մարդ արարածը ամենաբաւական չէ, ան բազմաթիւ կարիքներ ունի: Անոնցմէ մէկն է Աստուծոյ օգնութիւնը ունենալու ցանկութիւնը: Աստուած չուզեր մարդը նուաստացնել եւ իր բարձրութիւնը ցուցադրել: Բայց Աստուած կ'ողզէ, որ մեր կարիքները աւելի լաւ գիտնանք, անոնց մասին մտածենք եւ խորհինք: Ան կ'ողզէ, որ մեր կարիքները գիտակցական մա-

աղօթքը  
ինքնաճանաչման  
հասնելու  
լաւագոյն  
միջոցն է...

կարդակի բերենք, որպէսզի մենք մեզ աւելի լաւ ճանչնանք: Ինքնաճանաչումը կատարելութեան հասնելու միջոցն է: Եւ աղօթքը ինքնաճանաչման հասնելու լաւագոյն միջոցն է, որովհետեւ մեր կարիքները ոչ թէ միայն կը դնէ մեր գիտակցութեան լոյսին տակ, այլ նաեւ զանոնք Աստուծոյ նայուածքին տակ կը դնէ:

Աղօթքը, ըստ Յիսուսի ուսուցումին, միայն մեր անձերուն համար չէ, այլ մեզմէ աւելի՝ ուրիշներուն համար է: Աղօթքը պէտք է ծառայէ Աստուծոյ ժողովուրդին հետ մեր միասնութիւնը զգալու եւ անոնց նկատմամբ մեր պատասխանատուութիւնը զարգացնելու: Աղօթքը պէտք է ծառայէ գիտնալու, թէ մեր կեանքը ինքնանշանաբար ինչպիսիք է, այլ մենք կ'ապրինք ուրիշներուն համար, անոնց կարիքներուն հասնելու համար: Ինչպէս ողորմութիւնը՝ աղօթքն ալ ուրիշներուն համար կատարուած կամ կատարուող բարի գործ է:

Ողորմութեան եւ աղօթքի բարեգործութեան տարբերութիւնը այն է միայն, որ մինչ ողորմութեան բարի գործը մեր ձեռքով կը կատարուի, աղօթքին բարի գործը Աստուծոյ ձեռքով կը կատարուի: Երբ մենք կ'աղօթենք հիւանդի մը համար, մեզմէ ի՞նչ կու տանք: Միայն՝ աղօթելու պատրաստակամութիւնը: Սակայն Աստուած ինքն է, որ կը պարգեւէ բժշկութիւնը, կամ ինքն է, որ հիւանդին օգնելու կը հասնի:

Արդ, որպէսզի մարդոց հետ իմ միասնութիւնս զգամ, աղօթքը ամենէն անհրաժեշտ եւ ամենէն դաստիարակիչ մէկ կերպն է: Ուստի մնայուն կերպով պէտք է աղօթել: Աղօթելով մենք մեր հոգին տեւականօրէն կը բարձրացնենք. աղօթելը բարձրացման ճանապարհն է:

Ինչպէ՞ս աղօթել:

Երբ կ'աղօթենք՝ Աստուծոյ դիմաց կը կենանք: Անոր դիմաց կը կենանք

իբր անհատ որդիներ, որ իրենց Հօր կը խօսին: Բայց ամենէն կարեւոր աղօթական յարաբերութիւնը Աստուծոյ հետ՝ իբր համայնք եւ իբր ժողովուրդ կենալով կ'ըլլայ:

Նոր Կտակարանը եկեղեցիին մասին կը խօսի իբր Քրիստոսի մարմինը: Մենք այդ մարմինին անդամներն ենք: Քրիստոսի մարմինին անդամ ըլլալ կը նշանակէ, թէ իւրաքանչիւրս մեր առանձին արժէքը ունինք, մեր առանձին կապը ունինք Հօր հետ, սակայն միաժամանակ Աստուծոյ իսկ կամքով կանք ամբողջութեան մը համար: Հետեւաբար քրիստոնէական աղօթքը համայնքային եւ ժողովրդային աղօթք է:

Յիսուս երբ կը խօսի առանձնական աղօթքի մասին՝ չի մերժեր հաւաքական աղօթքը: Ինք եւս հաւաքական աղօթքի մասնակցող էր, եւ իր աշակերտներուն ալ թելադրեց հաւաքականօրէն աղօթել: Ու գիտենք, որ աշակերտները Յիսուսի երկրաւոր առաքելութեան աւարտէն ետքը՝ շարունակեցին համայնքային աղօթքը թէ՛ տաճարին մէջ եւ թէ՛ յետոյ՝ տուներու մէջ՝ երբ իրենց արգիլուեցաւ տաճարին մէջ աղօթելը:

«...երբ կ'աղօթէք, մի՛ շատախօսէք հեթանոսներուն նման»: Հարցումը որ կը դրուի այս պատգամին առիթով հետեւեալն է.՝ Աղօթքը կա՞րճ պէտք է ըլլայ:

Բայց Յիսուսի ըսածը կարճ աղօթք ընելո՞ւ կը վերաբերի:

Արդեօք Յիսուսի բացատրութեանց մէջ կա՞յ խօսք մը, որ մեզ կը լուսաբանէ:

Մտ 6.31-32-ին մէջ կը կարդանք. «...մի՛ մտահոգուիք եւ ըսէք.՝ Ի՞նչ պիտի ուտենք, ի՞նչ պիտի խմենք կամ ի՞նչ պիտի հագնինք: Այդ մտահոգութիւնները հեթանոսներուն յատուկ են»: Հետեւաբար, հեթանոսներուն նման շատախօսելը՝ երկար խօսիլը չէ, այլ Աստուծմէ աւելորդ բաներ խնդրելն է:

Մեզի համար շատ կարեւոր է տեսնել, թէ Յիսուս ինչպէ՞ս եւ ո՞րքան կ'աղօթէր: Օրինակ Ղկ 18.1-ին մէջ կը կարդանք. «...պէտք է միշտ աղօթել՝ առանց վհատելու»: Անշուշտ այս պատուէրը չի նշանակեր, թէ

Յիսուս կ'նուգէ,  
որ աղօթքը  
մեր կեանքին  
մնայուն  
բաժինը  
դառնայ:

ինքզինք: Այլ  
Յիսուս կ'նուգէ, որ աղօթքը մեր կեանքին  
մնայուն բաժինը դառ-

Աղօթքով է, որ  
Աստուծոյ հետ  
մեր սիրոյ կապը  
կը պահուի: Եւ  
աղօթքով է, որ  
քրիստոնեայ  
համայնքը մէկ  
ամբողջութիւն  
կը դառնայ:

նայ: Աղօթքով է,  
որ Աստուծոյ հետ  
մեր սիրոյ կապը կը  
պահուի: Եւ աղօթքով  
է, որ քրիստոնեայ  
համայնքը մէկ ամ-  
բողջութիւն կը դառ-  
նայ:

Հիմա: Ոմանք կ'ա-  
ռարկեն, որ եկեղեցւոյ  
արարողութիւնները երկար են: Թէ՛ Յիսուս  
ըսաւ, որ կարճ աղօթեցէք:

Բայց արդեօ՞ք եկեղեցւոյ արարողու-  
թիւնները երկար են. եւ Յիսուս «Կարճ  
աղօթեցէք» ըսա՞ւ:  
Ըսի, որ Աղօթքը մարդուն եւ Աստուծոյ  
միջեւ սիրոյ կապն է: Նաեւ ըսեմ, որ  
աղօթքը Աստուծոյ գոհութիւն յայտնելու  
համար է: Այս կեանքին մէջ մեր վայելած  
բարիքներուն համար աղօթքով է, որ առ  
Աստուած մեր երախտագիտութիւնը կը  
բարձրացնենք:

Մեր կեանքի թէ՛ դրական եւ ուրախ, թէ՛  
ժխտական եւ տխուր փորձառութիւններուն  
համար, երբ գոհութիւն կը յայտնենք,  
մենք մեզ Աստուծոյ նախախնամութեան  
յանձնած կ'ըլլանք եւ անոր հանդէպ միշտ  
երախտագէտ սիրտ կ'ունենանք:

Մարդ արարածը ոչ թէ միայն աղերսներով,  
հայցուածներով, խնդրանքներով եւ  
աղաչանքներով Աստուծոյ պէտք է աղօթէ,  
այլ նաեւ անոր տուած բոլոր բարիքներուն  
եւ իր ապրած բոլոր փորձառութիւններուն  
համար գոհութիւն պէտք է յայտնէ Աստուծոյ:  
Աղօթողը պէտք է գիտնայ մի՛շտ փառաւորել  
գԱստուած: Ոչ թէ որովհետեւ Աստուած

փառաւորուելու կարիքը  
ունի կամ փառաւորուիլ կը  
սպասէ, այլ անոր համար որ  
արարչութեան բարիքները  
վայելող եւ կեանքի  
փորձառութիւններէն  
անցնող սիրող սիրտը,  
երախտագէտ սիրտը  
այլ ճամբայ չի կրնար  
ունենալ:

աղօթքը իբր  
սիրող եւ  
երախտագէտ  
սրտի  
արտայայ-  
տութիւն՝  
ժամանակով  
չի  
սահմանա-  
փակուիր:

Հետեւաբար, աղօթքը  
իբր սիրող եւ երախտագէտ սրտի  
արտայայտութիւն՝ ժամանակով չի  
սահմանափակուիր:

Գ-րդ համարով, Յիսուս աղօթել  
սորվեցնելու կը սկսի, եւ կ'ըսէ՝ «Ուրեմն,  
այսպէս աղօթեցէք»: Ան «Հայր մեր»ը կը  
սորվեցնէ:

Անցնինք «Հայր մեր»ին:

Անիկա հրապարակային աղօթք մըն է:  
Ինչէ՞ն գիտենք, որ այդպէս է:

Քերականօրէն:

«Հայր մեր»ը հաւաքական նկարագիր  
ունի, այսինքն՝ հաւաքանօրէն ասելի  
աղօթք մըն է: Թէեւ ասիկա չի նշանակեր,  
թէ միայն սահմանուած է հրապարակային  
գործածութեան, բայց նուազագոյնը՝  
այդպէս կը թելադրէ:

Յիսուս այս աղօթքը սորվեցնելով մեզ  
կը քաջալերէ, որ աղօթելու ատեն՝ նոյնիսկ  
երբ առանձին ենք՝ առանձին չզգանք մենք  
մեզ, այլ ուրիշներու հետ միասնութեան  
մէջ զգանք:

Եկեղեցին շէնքը չէ, եկեղեցին  
Քրիստոսի մարմինն է, հաւատացեալներու  
ամբողջութիւնն է. երբ կ'աղօթեմ՝ ինքզինքս  
միշտ անոր մասնակից զգալով պիտի  
աղօթեմ:

«Հայր մեր»ը սորվեցնելով՝ Յիսուս չի  
մերժեր հրապարակային աղօթքը, այլ կը  
մերժէ աղօթքի այն տեսակը՝ որով աղօթող  
ենթական ինքզինք ցուցադրել կ'նուգէ,  
այլ խօսքով՝ ինքզինք կ'անջատէ այն  
ամբողջութենէն, որուն անդամ է:

(Շարունակելի 22)



**Յաջորդ շաբաթույժ  
Ժամանակացույց**

Երեքշաբթի, 27 Յունուար 2009  
19.00 > Ֆիլմի ցուցադրութիւն՝ JOSHUA  
տե՛ս ներքեւի ծանուցումը:

Յինգշաբթի, 29 Յունուար 2009  
11.00 > Աղօթածողով՝  
Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Կիրակի, 01 Փետրուար 2009  
Բարեկենդան Առաջաւորաց Պահօր  
09.30 > Առաւօտեան ժամերգութիւն  
11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

**ՏՆՕՐՀՆԷՔ**

Տնօրհնէք փափաքող  
ընտանիքները,  
թող բարեհաճին դիմել  
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,  
հեռաձայնելով 514 331 5445 x203  
թիւին,  
կամ՝ 514 909 5203 թիւին:

**ՀԻՄՆԱԴԱՆՐՈՒ ԱՅԺԵԼՈՒԹԻՒՆ**  
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.  
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի.  
514 331 5445 x203 կամ 514 909 5203 թիւին:

Սոյն թերթիւն ե-նամակով ստանալու  
չաւար Ձեր ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՈՒՆԵՅԷՔ  
eglise58@sourphagop.com-իւ

Հոգեւանգստեան Ձեր  
արձանագրութիւնները նախօրօք  
ԿԱՏԱՐԵՅԷ ԿԱՊՈՒԷԼՈՎ  
ԵԿԵՂԵՅՈՅԱ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Հասարակութիւն ժողովութեան շաբաթ  
ԵԿԵՂԵՅՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ  
ԲՅՅ Է

ԵՐԿՈՒՇԱԲԹԻՒՆ ՈՒՐԲԱԹ  
ժամը 8.30-էն 16.00

Հաճե՛ք կապուիլ բարօրութիւն՝  
514 331 5445 x202  
կամ Հոգիին՝  
514 331 5445 x203  
կամ գրել շեքեթեալ ե-ՀԱՍՅԷՐՆ՝  
eglise58@sourphagop.com



Նախորդ թիւերը կրնաք գտնել  
[www.sourphagop.org/lradou](http://www.sourphagop.org/lradou)  
կայքէջին վրայ